

# ՊԱՏԿԵՐ

ՀԱՆԴԵՍ ԿԻՍԱՄՍԵԱՅ

ԵՐԿՐՈՐԴ ՏԱՐԻ, ԹԻԻ 16

*1 Դեկտեմբեր 1891*



ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ

ՏՊԱՐԱՆ

ՃԻՎԼԼԵԿԵԱՆ

1891

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ



1. ԳՐԻՍՏՈՆԷԻՆ ՍԻՐՏՆ ՈՒ ՍԷՐ — Հ. Ս. Վ. Տէր-  
ձէշէան.
2. ԲՍՐՈՅԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ — Թարգմ. Յ. Վ. Մխի-  
ճէան.
3. ՎԵՐՁԻՆ ՏԵՐԵԻՔ — Կարապէտ Ա. Ուլէան.
4. ՊԱՏՄԱԿԱՆ ԾԱՆՈԹՈՒԹԻՒՆ Քաղաքական Տնտե-  
սագիտութեան — (Շար և Վերջ) Յարութիւն Ունճէան:
5. ԿԵԱՆՔ ԲԱՌԻՑ (Շարայարութիւն) — Թ. Թէրզէան

# Պ Ա Տ Կ Ե Ր

Հ Ա Ն Դ Է Ս Կ Ի Ս Ա Մ Ս Ե Ա Յ

Երկրորդ Տարի

թիւ 16

1 Դեկտ. 1891

## ՔՐԻՍՏՈՆԷԻՆ

### ՍԻՐՏՆ ՈՒ ՍԷՐ



Մարդու մէջ կայ մեծ կարողութիւն կամ զօրութիւն մը եւ այն «Իբր» է: Մարդկային սրտին մէջ վառած է Աստուած այն հուրը զոր «Եբ կը կոչենք»: Խորհրդաւոր բոց մըն է այն որ կը բարձրանայ, կը տարածուի, կը յարի, կը սաստկանայ, կը լսորբոքէ այնպիսի զօրութեամբ ու քաղցրութեամբ եւ թափանցութեամբ, որ ոչինչ կրնայ անոր հաւասարիլ:

Հռչակաւոր հեղինակ մը կ'ըսէ. Աստուած կըր մարդն բուսեղծեց, զանիկայ յատկապէս բարութեամբն օժտեց. վասն զի այս՝ ստուգիւ անջնջելի կնիք մըն է աստուածային նմանութեան: Բայց բարութիւնն ո՛չ ապաքէն այն գորովոյ զօրութիւնըն է որ կը ծաւալի եւ մարդու սիրտն անոր հետոյն է:

Աս կարողութիւնը կամ զօրութիւնը մարդկային բնութեան ազնուադոյն էութիւնն է. այնպէս որ զմարդ անսիրտ անուանել ամենադառն թշնամանք մըն է որով սաստկապէս կը զգածուինք: Վերջապէս աս կարողութիւնն է որ կը տիրէ ու կը վարէ մարդկութեան թէ բարի եւ թէ չար գործողութիւններն: Աս կէտն անա մեր ուսումնասիրութեանց նիւթ պիտի ընծայէ:

\*  
\* \*

Ա.

Անտարակոյս ունինք միտք մըն ալ, բայց միտքն որչափ բարձր թէ ըլլայ, այն գերագոյն իշխանութիւնը չէ որ հոգւոյն խորը թափանցէ, մարդկային կենաց վարչութիւնն ընէ: Միաքն էական է, վասնդի լուսաւորիչն ինքն է, բայց սրոշիչ սիրտն է: Իրականութիւնն ու ճշմարտութիւնն եթէ նկատենք, միտքն սպասուոր կը գտնենք սիրոյ: Նոյն իսկ բարձրագոյն իմաստասիրութեամբ զարդարուած միտքն յաճախ ձմեռնային արեգակ մըն է որ կրնայ շրացընել բայց ջերմացնել չէ կարող: Ջերմացուցիչը սիրտն է, սիրտն է որ կը մղէ կը տանի: Սիրտն ամենայն ինչ կատարողն է. ինք միայն մեծագործ է, ամէն անձնութիւն, ամէն գորութիւն, ամէն բեղմնաւորութիւն, ամէն առաքինութիւն սիրոյ ծնունդն է. աւա՛ղ, պէտք ենք յարել՝ միանգամայն ամէն տկարութիւն, ամէն մոլորութիւն, եւ նովին իսկ՝ ժամանակն եւ յաւիտենականութիւնն: Ատոր համար իրաւամբ ըսուած է, Աստուծոյ եւ մարդու մէջ եղած խընդիրը սրտի ու սիրոյ խնդիր մըն է: Օրինաց առաջին պատուիրանը՝ զայն արժանաւորապէս լսել ուղղներուն համար այս է. «Սիրեսցես զՏէր աստուած քո յամենայն սրտե քումև, յամենայն անձնե քումև, յամենայն մտաց քոց, յամենայն զօրութեան քումև եւ զբնկեր քո իբրեւ զանձն քո»:

Մահ այս օրէնք ամենայն ինչ կը բովանդակէ եւ ամէն բանի որոշիչ է: Իրաւ է, միտքն է որ կը խօսի ազգուօրէն, սակայն եթէ անիկայ միայն խօսի, թէեւ ամենայն ինչ ըսէ, եթէ սիրտը լռէ, ոչինչ տակաւին կատարուած է, զեւ վճիռ չէ արձակուած: Անլուծանելի կը մնան ամենամեծ խնդիրներն, երկնաւորներէն՝ Աստուած, Հաւատք, Յոյս, Սէր, այսինքն կենքը ու մահ, եւ երկրաւորներէն՝ հայրենիք, ընտանիք, եղբայրութիւն, բարեկամութիւն, զթութիւն եւ ամենայն ինչ որ վեհ ու վսեմ է: Աս պատճառաւ անա մեր բարեբախտութիւնն ու զըթբախտութիւնը սրտին մէջ փնտռելու ենք:

Եւ աս ո՞վ չզիտեր: Սրտիւ կը կրենք ու կը վայելենք: Միայն սիրտն է որ զմեզ ստուղիւ բարեբախտ ու զժքազգ կ'ընէ: Բարութիւն կամ չարութիւնն միայն մեր սրտէն կը բխէ: Մեր թէ՛ մեծութիւնն եւ թէ՛ նուաստութիւնը կը ծնանի այն սէրէն, որուն անձնատուր կ'ըլլանք սերտիւ: Ուրեմն կրկնենք, որովհետեւ սիրոյ օրէնքն մարդկային կենաց հիմունքն է, ամէն

խնդիր որ Աստուծոյ ու մարդու, մարդու եւ ընկերին մէջ կը ծագի, սրտի ու սիրոյ հետ սերտիւ կապուած է:

Քանի որ աս ճառագայթը մարդկային միտքը չի լուսաւորեր, ցորչափ որ սիրտը ցուրտ եւ անզգայ կը մնայ, անսէր մարդն ինչ կրնայ ընել: Ռամիկ ու դոեհիկ երեւոյթ մը կ'ըզդեհեունք՝ անչարժ ու անկենդան կը մնանք: Բայց երբ սէրն հասնի, բոցը բորբոքի, մեր կերպարանքն ամբողջ եւ յանկարծ կը փոխուի: Զմեզ ճանչնալն այլ եւս անկարելի է: Մեր ճակատին վրայ ու սրտին մէջ երկնաւոր երջանկութիւն մը կը նշմարուի որ ամէն մարդու հասարակ չէ:

Մէկ խօսքով, սրտիւ, սիրով, այն գերազոյն եւ անմահական կարողութեամբն է որ մարդ ազնուութիւն, փափկութիւն եւ վսեմութիւն կ'առնու: Սրտիւն է որ դարձեալ ինք զինք կը ստանայ ամենայն ինչ տալէն ետեւ. սրտիւ ամէն զիւցազնութիւն կը գործէ եւ անձն իսկ կը զոհէ:

Տեսէք մարդկային սրտին մէջ հօր ու մօր սէրն ինչ կրնայ ընել: Սիրող հայրն ու մայրը միթէ սովորական անձիւնք են: Ո՞րչափ կը փոխուի երիտասարդն հայր ըլլալէն վերջ, եւ երբ օրիորդն մայրութեան քաղցր անուն սկսի կրել: Դիտեցէք ամուսնական սէրն եւ ամեն օրինաւոր ու սուրբ սիրոյ տեսակներն որոնք Աստուծոյ կը ծագին: Ո՞րչափ հզօր են ասոնք, սրբան ազգու, ինչչափ տոկուն:

Ստուգիւ մեծ է սէրն, իրաւամբ կը զոչէ քրիտոսասէր շատ զլայուն հեղինակ մը: Սիրոյ բխմունք են սչ միայն մեծագործութիւնք եւ բուն զգածմունք, այլ եւ մեծագոյն խորհուրդք: Սրտէն կը ցայտեն լաւ, հանձարեղ եւ մաքուր մտածութիւնք, դարձեալ սրտէ կը զեղուն նկատողութիւնք եւ յանկարծական լուսաւորութիւնք, վասն զի սիրտն իր պայծառութիւններն ունի եւ անակնկալ յայտնութիւններն: Ըսուած է երբեմն թէ՛ կոյր է սէրն: Մեծ մղտրութիւն մըն է աս: Ոչինչ կայ ճշմարիտ սիրոյ նման լուսաւոր եւ խելայի: Ասո՞ր համար ահա հեթանոսաց Առաքեալն սրտի լուսաւորեալ աշուղտը կը յիշատակէ: Սուրբ Գիրքն ալ կը սովորեցնէ թէ մարդ սրտիւ փրկուէտ մտածութիւններ կ'ունենայ եւ հոգոյ բժշկութիւններ:

Ըսածնիս համառօտներ: Մարդկային ամէն երջանկութիւն եւ ապերջանկութիւն, արժանապատուութիւն եւ զօրութիւն կայացած է այն կենդանի եւ երբեմն ազնիւ զգայնութեան վը-

րայ, որ կը զեղու կը տարածուի, իրաց հետ սերտիւ կը յարի եւ անոնց ամէն տպաւորութիւնները խորապէս կ'ընդունի:

Սիրել վսեմ տուրք մըն է: Զայս մենք երբեմն շատ սուղ կը վճարենք՝ մեր արցունքովն ու արիւնով: Բայց, իբրեւ տանջանք կամ երջանկութիւն, սէր մարդկային կեանքը տիրապետութեամբ կը վարէ միշտ անպատճառ:

Հ. ՍԵՐ. ՏԵՐԷԷԷՆ

## Բարոյական Պատմոյքիւն

### ՅԱԿՈՒՒ ՎԱՐՊԵՏԸ

ԿԱՄ

#### ՀԱՒԱՏՔ, ՅՈՅՍ, ՍԵՐ, ԱՌԱՔԻՆՈՒԹԻՒՆՔ

«Ման հաւատք, յոյս, սէր, սոքա երեքեան. և յեծ քան զոսա՝ սէր է» (Ա. կորնթ. ԺԳ, 13):

Արտաքոյ կարգի խիստ ձմեռ մը կ'ընէր. տեղացած առատ ձիւներ երկայն ժամանակ հողին երեսը ծածկած էր, ցրտասառոյց եւ բռնաշունչ հողմունք անդադար կը փչէին. այնպէս որ խաւա- կան չքնաղ երկրին այս փոքրիկ աւանը կարծես թէ ամայի եւ սառնապատ դաշտավայր մը դարձած էր: Գեղջուկ կանայք չէին կրնար այլ եւս իրենց շինական կողովներովն երթալ մինչեւ 'ի քաղաք՝ հոն ծախելու համար իրենց ագարակաց արդիւնքը, հաւկիթ եւ ուրիշ զանազան բերքեր: Էրիկ մարդիկներն ալ բոլոր օրն ու զիշերուն մեծ մասը խոհանոցին մէկ անկիւնը քաշուած ու կծկուած կ'անցընէին, ուր ցած կրակարանին մէջ ամառուան եղանակէն պատրաստուած շերտ շերտ փայտերը բոցաճաճանչ փայլմամբ եւ ճարճատմամբ կը վառէին: Մերթ եւս երբ ամպերը թոյլ կուտային երկնից գարջ կապուտակը նշմարելու՝ կռնակներն հովէն պատսպարելով եւ մաշած ու կարկատուն ցնցոտիներնուն մէջ փաթթուած, արեւուն գաղջ ճառագայթին

առջեւը նստած կը տաքնային: Հոն մէկտեղ ժողովուած տրտում տխուր իրարու հետ կը խօսակցէին, եւ այս իրենց խօսակցութեանց զլլաւոր նիւթերն էին՝ ձմեռուան շատ խիստ եւ անսովորական ըլլալը, աշխատութեանց նուազութիւնը եւ հետեւաբար շահու պակասութիւնը, ապրուստի միջոցներուն սակաւութիւնը եւ ապագային անստուգութիւնը: Յետին աստիճանի թշուառութիւն մը բացարձակ կը տիրէր սոյն փոքրիկ գիւղաքաղաքին մէջ, ուր բազմաթիւ ընտանիք զրտէն եւ անօթութեանէն կը լկէին ու կը տանջուէին. ասոնց մէջէն վերջինը չէր մեր ատաղձագործ Յակոբ Վարպետին ընտանիքը. թէպէտ եւ ինքն առաքինի՝ խոհեմ եւ քրիստոնեայ անձ մ'էր, բոլորովին անձնանուէր իրենիցներուն վրայ, փութաջան եւ աշխատասէր. ըստ իմիք եւս՝ որչափ որ մարդկային տկար բնութեանս կրնայ պատշածիլ՝ կը նմանէր Նաղարեթի այն մեծ Հիւսան, որ Փրկչին Մերոյ Յիսուսի Քրիստոսի Աստուածահայր կոչուեցաւ:

Յակոբ՝ 'ի կենդանութեան բարեյիշատակ հօրն իւրոյ՝ որ նաեւ արդարակորով մարդ մ'էր, բնաւ բանի մը պէտք ունեցած չէր, բայց ո՛ր էին հիմայ այն անցած պացած երջանիկ ժամանակները. այն ատեն թէ՛ աշխատութիւն ու գործ պակաս չէր ըլլար եւ թէ՛ շահ ու վաստակ կար: Իոկ ինքն յաճախած ըլլալով ժողովրդապետին դպրոցը՝ ալ կոչտ գիւղացի մը չէր, նաեւ բանին հաւատոց քարոզութեան ստէպ ունկնդրութեամբ եւ երեկոյներն ու տօնի օրերը շարունակ հողեշահ գրքեր կարդալով, գորոնք փոխ կ'առնուր ժողովրդապետէն, ըստ բաւականի հմտութիւն ստացած էր Աստուծոյ եւ հոգւոյ վերաբերեալ խնդրոց մէջ. 'ի բնէ եւս այնքան ուշիմութիւն եւ մտավարժութիւն ունէր՝ որ զիւրաւ կրնար պատանձեցընել մոլարանուն յառաջագիմութեան կարծեալ չիմաստունները, որք իրենց անգէտ գիտութեամբը կը պարծին եւ չեն այլ ինչ բայց եթէ ստապատիր եւ հարեւանցի դաստիարակութեան մը թունալից պտուղներ: Սոյնպիսի բարի կրթութիւն մը ուրեմն ինքն առած էր, եւ ըստ այնմ ալ կը դաստիարակէր իւր զաւկըները՝ Պետրոսիկն եւ Լուչիան:

Շատ օրերէ 'ի վեր Յակոբ վարպետ գործ չէր կրցած գտնել՝ ուստի իւր ընտանեաց պիտոյքն հայթայթելու համար ստիպուեցաւ տան կահ կարասիքէն բաւական բան ծախելու. փոխանակ մահճաց՝ յարդալից անկողինք միայն մնացեր էին, որոնց վրայ կը պառկէին այն ազքատութենէ տկարացած արարածները:

Շարաթ իրիկուն մ'էր. հացի պատառ մը միայն իրենց ընթերեաց անզը պիտի բռնէր. թէպէտեւ մեր բարեմխտ հիւանդ անօթութենէն սաստիկ նուաղութիւն կը զգար, այսու ամենայնիւ չուզեց ճաշակել անկէ, եւ հաւասար բաժնեց զայն իւր կողակցին Ֆիլոմնայի եւ պաշտելի զաւակացը մէջ: Յետոյ ամենքն 'ի միասին Ս. Կուսին վարդարանը զրուցեցին եւ երեկոյեան ազօթքը լմնցընելէն ետքը՝ ննջելու գնացին, փաթթուելով այն մնացած քանի մը կտոր մաշած կապերտներնուն մէջ: Սակայն մեր բարեկրօն մարդը՝ ըլլայ անօթութենէն, ըլլայ ցրտէն եւ սրտնեղութենէն եւ կամ այն սարսափելի փոթորկին մոռնչելէն, որ կարծես թէ հիմնայատակ պիտի քայքայէր տունը, չկրցաւ ընաւ. մինչեւ առաւօտ աչքը դոցել: Հազիւ թէ լուսոյաւ՝ յարգալիք անկողնէն ելնելով եկաւ նստաւ կոտրած եւ խոտը թափած աթոռի մը վրայ, կոթընցընելով իւր արմուկներն անողորկ սեղանին վրայ. յետոյ գլուխն իւր երկու ձեռաց մէջ առած՝ կը մտմտար թշուառը իրենց ողորմելի վիճակին վրայ, եւ հառաչանօք կը խնդրէր Աստուծոյ որ զթար եւ ողորմէր:

Հովը սակաւին սաստկաշունչ կը փչէր եւ տարափանման անձրեւին կաթիլները կուգային կը զարնէին պատուհաններուն խորտակեալ ապակեաց դէմ բուն զօրութեամբ: Նոյն միջոցին զաւկներն ալ քուններնէն արթնցան. «հայրիկ՝ ցուրտ կը զգամ», ըսաւ Պետրոսիկը. «անօթի եմ» աւելցուց անդիէն նուաղ ձայնով մը փոքրիկ Լուչիան: Աստուծոյ իմ, ինչպիսի սրտածակիկ ցաւ իմացաւ այն ատեն եղկելի Յակոբը. «յուսանք Տիրոջ բարութեանը վրայ», պատասխանեց զժբախտ հայրը՝ զժուարաւ կարենալով զսպել իւր հեծկտանքը:

«Ա՛հ, իմ էրեկա Յակոբ», ըսաւ վրայ տալով Ֆիլոմնայ իւր կիներ՝ ինքն ալ անկողնէն ելլելով փայտ կտրած. «յիրաւի, այս է մեր ճշդրիս վիճակը. որչափ աւելի կ'ազօթենք եւ զմեզ Աստուծոյ կը յանձնենք, այնչափ ալ գործերնիս գէշ կ'երթայ. աշխատութիւն չկայ. միջոցներ իսկ մեզի կը պակսին քանի մը զահեկան վատկելու համար՝ որպէս զի ուժերնիս պահենք եւ անուցանենք ու մերկութենէ ազատենք այս մեր երկու խեղճ եղորմելի որդիքը, զորոնք կը տեսնենք հալիլ մաշիլ եւ ցրտէն զողողալ՝ առանց կարենալու որ եւ իցէ կերպով օգնել անոնց եւ վշտերնին մեղմացընել: Շատ բան ծախեցինք արդէն մեր «տանեցածէն. կը մնայ մեզի այժմ ինչ որ միայն անհրաժեշտ «հարկաւոր է՝ որպէս զի մեր ազգաւրն բնակարանը որջ մը

«չդառնայ եւ մենք ալ անասնոց պէս չոր գետնին վրայ չպառ-  
կինք: Ի՞նչ է արդեօք մեր յանցանքը, որ այսքան պատժոյ ար-  
ժանի եղած ենք: Եթէ այսպէս տեւելու որ ըլլայ, ինձի անանկ  
«կուղայ որ համբերութիւնը ալ կը հասնի, Աստուծոյ կամաց  
ճամակամութիւնս պակսելու վրայ է. եւ շատ կը վախնամ թէ  
«օր մը յուսահատութիւնը իմ վրաս պիտի յարձակի»:

Յակոբ լռիկ մնջիկ մտիկ ըրաւ իւր ամուսնոյն, յետոյ՝ երբ  
անիկայ իւր խօսքը լմընցուց՝ հանդարտ եւ միանգամայն քաղցր  
խստութեամբ մը այսպէս պատասխանեց:

«Համակարիք եւ վշտակից եմ քեզի՝ կողակիցդ իմ՝ զգացած  
«ցաւերուդ համար, մանաւանդ տեսնելովդ մեր ամէնուն կրած  
«տառապանքն ու նեղութիւնը. բայց չեմ կրնար ընաւ հաւանիլ  
«այն քու ըսածներէդ քանի մը բաներուն, որոնք կը ցուցնեն  
«թէ՛ որքան անհանձար մտօք կը խորհիս եւ թէ՛ որչափ քիչ  
«խորունկը մտած թափանցած ես մեր սուրբ կրօնից վերաբեր-  
«եալ իրաց մէջ. ստուգիւ այս բաներս քեզի պէս ըստ ամենայնի  
«բարեկրօն տանտիկին մը պիտնալու եւ տեղն ՚ի տեղը ճանչնա-  
«լու էր:—Անշուշտ բերնէդ ըստ դիպաց ելան այն պոփփ եւ  
«յոտտհարտութիւն խօսքերը. նախ եւ յառաջ ըսէ՛ տեսնեմ՝ Հա-  
«տարի՛ որ զմեզ կը լուսաւորէ, Յոյ՛ն որ մեր նեցուկն ու ապա-  
«ւէնն է եւ Սէր՛ն որ զմեզ կը քաջալերէ ու կը զօրացնէ, ունիս  
«արդեօք այս երեք առաքինութիւնները»:

«Ի՞նչ կը մտնեն հոս Հաւատքն՝ Յոյսն եւ Սէրը», պատաս-  
խանեց Ֆիլոմենայ:

«Այո՛, իրաւցնէ անոնք մեծ կարեւորութիւն ունին մեզի  
նկատմամբ», կրկնեց բարեմիտ էրիկը. «Հաւատքով գիտենք՝ թէ  
«Աստուած մը կայ, արարիչ երկնի եւ երկրի, ամենակարող եւ  
«անհուն էակ մի, դարձեալ անոր միջոցաւ գիտենք՝ թէ ինքն  
«ատեղծած է բոլոր մարդիկները, որպէս զի զինքը ճանչնան, սի-  
«րեն եւ իրեն ծառայեն իբրեւ բարեգութ չօր մը. նմանապէս  
«քինչ որ բնութեան անսահման եւ վսեմ արարչագործութեան  
«մէջն կը զանտէ՛ այն ամենը ստուգիւ մեզի համար ստեղծու-  
«ած է, վասն զի մենք բոլոր արարածոց վրան իշխան եւ տէր  
«կարգուած դրուած ենք. հետեւաբար կրնանք ուղածնուս պէս  
«տրամադրել այն ամէն էակներն որ կան աշխարհքիս մեջ՝ բայ  
«ի՛ մեր անձերէն որք Աստուծոյ միայն կը պատկանին. նորս  
«սոգի է՞ն է՞: Վերջապէս Հաւատքը կը սորվեցնէ մեզի՛ թէ ան-  
«մահ հոգի մ'ունինք, ու թէ կրկրիս վրայ մեր անցուցած կեանքը

ուրիշ բան չէ՝ եթէ ոչ անցք մը, յորում թէ որ չար գործիւն ըլլանք՝ մահուրնէ հտըք խտիւ պիտի պատժուինք յաւիտեանս՝ «Կանութեան մէջ. իսկ եթէ բարիք ընելու ըլլանք՝ հոգինիս յաւիտեանս պիտի վայելէ Արքայութեան անանց երջանկութիւնը»։ «Ուստի Աստուած բարձրագոյն պայմանաւ արդար է»։

«Արդ եթէ Աստուած անհուն բարի եւ արդար է, չկրնար ըստ քմաց թշուառութիւններ խաւրիլ իւր սիրելի որդւոց, հեւտեւաբար երբոր չարերուն զլսուն փորձանքներ կը հասցնէ՝ ամոնք կրնան իրաւցընէ այն ատեն պատիժ կոչուիլ, վասն զի «թէ՛ դիրենք պատժելու եւ թէ՛ միանգամայն զրդելու եւ ապաշարութեան հրաւիրելու համար կը զրկէ. իսկ երբ բարի մարդկանց ձախորդութիւնք կը համնին—որչափ որ ամէնքնիս ալ քիչ շատ մեր պակտութիւններն ունենանք—ասոնք այն աւտեն պատիժ չեն՝ հապա երկնառաք պարգևներ, որովհետեւ «Աստուած այս կերպով փորձելով իւր հաւատացեալ որդւոց «հաւատարմութիւն եւ սէրը՝ կը անօրինէ իրենց թէ՛ այս աշխարհքիս մէջ եւ թէ՛ ՚ի հանդերձելունս հարիւրապատիկ վարձատրութիւն ՚ի փոխարէն անոնց կրած նեղութեանց եւ վշտաց»։

«Յոյն այն առաքինութիւնն է՝ որ մեզի վտահութիւն կրուայ առ Աստուած, եւ կը յորդորէ զմեզ ազօթից միջոցաւ իննդրելու այն ամեն հարկաւոր բաներն՝ որոնցմով կրնանք ձեռք «բերել մեր հոգւոյն յաւիտեանական փրկութիւնը, եւ նաեւ մեր «ժամանակաւոր մարմնոց կեանքը պահպանելու համար պարտուպատշաճ եղած զարմանները. որովհետեւ ստուգիւ այս երկրիս «վրայ է որ պէտք է մենք մեզի արգիւնքներ դիզենք, որպէս «զի յետոյ երկնից մէջ վայելենք այն անվախձան ուրախութիւնը»։ «Այս Յուսոյ առաքինութենէն յառաջ կուզայ Համբերութիւնը, որով կը հանդուրժենք հակառակութեանց, եւ որոնցմով թէպէտ Տէրը կը հաճի փորձել զմեզ՝ սակայն սպանով ըլլալու «ենք որ Աստուծոյ անսխալ արդարութիւնը երեսի վրայ չկրնար «թողուլ զմեզ մեր հարկաւորութեանց մէջ. այնպէս որ կամ «յառաջ կամ ետքը լիապէս պիտի վարձատրուինք մեր կրած «վշտաց ու տառապանաց փոխարէն, մեր հաստատամիտ զօրու «թեամբ այն նեղութեանց տոկախուս եւ վտահութեամբ Աստուածային խոստմանց սպասեխուս համար»։ Մինչդեռ Յուսահատութիւնը ուրիշ բան չէ եթէ ոչ տարապայման չվտահութիւն «Աստուծոյ բարութենէն եւ արդարութենէն՝ զրգմամբ ստանալի, որն որ թշնամի Բարձրելոյն ըլլալով՝ կը ջանայ այս կերպ

պով ծանր նախատինք մը բերելու Արարչին մեծվայելչութեան «դէմ, եւ մեր հողիններն ալ 'ի կորուստ մատնելու: Եւ յիրաւի այս կենցաղոյս վշտաց եւ նեղութեանց մէջն է՝ որ բազմադիմի «առիթներ ունինք այս փրկաւէտ առաքինութիւնն 'ի գործ զնեւրու համար, վասն զի մէկ կողմանէ խիստ շատ պէտք ունինք «Աստուածային օգնութեանը, եւ միւս կողմէն եւս զփոխային «ոտոխը աւելի դիւրին կերպով կրնայ զմեզ որսալ յուսահատութեան միջոցաւը»:

«Իսկ Սէրն այն առաքինութիւնն է՝ որով կը սիրենք զԱստուած ամէն բանէ վեր, իբր դերազոյն էակ եւ Արարիչ ամենայնի, որ կը պարզուէ մեզի ամեն բան, որ կը պահպանէ եւ «կը զօրացնէ զմեզ ու կը մատակարարէ մեզի յաւիտենական «երջանկութիւնն ստանալու միջոցները, որ զմեզ ուրիշ վախճանի «համար ստեղծած չէ՝ ըստ պարիստի իւրո՞ւ եւ նմանութեան՝ եթէ ոչ «որպէս զի զինքը սիրենք եւ իրեն ծառայենք այս աշխարհքիս վրայ, եւ յետոյ արքայութեան մէջ յաւիտենաս վայելենք զինքը: Արդ որովհետեւ պէտք է որ մենք սիրենք զՏէր Աստուած «յաօնայն սրբէ, յաօնայն անյնէ եւ յաօնայն մբայ եւ յաօնայն զօրո՞ւ «իւնէ, ինչպէս կը սորվեցընէ Աւետարանը, ուրիշ լաւագոյն «կերպով չենք կրնար 'ի գործ զնեւ այս պատուիրանը՝ եթէ ոչ «վիշաք եւ նեղութիւնք կրելով. մտածենք որ Հայրն երկնաւոր՝ «յօդուտ եւ 'ի բարութիւն մարդկային ազգին՝ իւր անսահման «իմաստութեան բարձրագոյն խորհրդովն ուղեց փրկել զմեզ «յաւիտենական մահուրնէն եւ այս նպատակաւ աշխարհք խաւքեց իւր միածին Որդին Յիսուս Քրիստոս, որ իւր անչափ սիրովը զմեզ փրկելու համար ծնանիլ եւ ապրիլ ուղեց ամէն կերպ «վշտաց եւ տառապանաց մէջ ու մեռնիլ ամենազառն տանջանքներ կրելով: Յետոյ երկինք համբառնալէն ետքը՝ զՀոգին Սուրբ «խաւրեց, իւր որդւոց միտքը լուսաւորելու համար, որպէս զի «փրկագործ Տնօրէնութեան անհուն բարութիւնը ճանչնալով «գիտնային եւ կարենային օգուտ քաղել անկից»:

«Այս ասանկ է, ո՞վ իմ կողակիցս, մի է Աստուած յեւութեան, եւ երբեակ՝ յանձինս, ինչպէս կը դաւանինք սուրբ հաւատոյ զօրութեամբ, իսկ Յուսոյ առաքինութեան միջոցաւ կը «խնդրենք Աստուծմէ մեզի պէտք եղածները եւ Սիրոյ ներդրուածութեամբ կը սիրենք եւս զինքը: Այս երեք աստուածատուր «առաքինութիւնք միբարութեան խորհրդով 'ի վերուստ կ'իջնեն «մեր սրտին մէջ, եւ 'ի գործ զնեւով զանոնք՝ այս աշխարհքիս

«վրայ կրած աշխատութիւններնիս ու զգացած հակառակու-  
«թիւններնիս այնչափ դառն եւ անտանելի չեն երեւնար, որով-  
«հետեւ խաղաղութիւնն Աստուծոյ ոչ 'է վէր է քան զամենայն միտս»  
«միշտ կը տիրէ բացարձակ մեր հոգւոյն մէջ»

Բ.

Հազիւ թէ Յակոբ Վարպետն այս խօսքերը լինցուցած էր՝  
զուռը զարնուեցաւ. մէկէն վազեց բանալու. «ո՛հ, բարի լոյս՝  
«բարով եկաք, Առաջնորդ հայր սուրբ. ի՛նչ հով փչեց՝ որ զուք  
«այս ժամուս, ասանկ սարսափելի օդով մը հոս մեզի հրամայե-  
«ցիք», ըսաւ՝ քահանային աջն համբուրելով. եւ ազաչեց որ քիչ  
մը յոգնութիւն առնու հոն դանուած հին եւ մաշած աթոռի մը  
վրայ, որովհետեւ ատաղձագործին տունը նոր նստարան մնա-  
ցած չէր:

«Քրիստոսի զինուոր ենք, պատասխանեց Տէր Յովակիմ ժո-  
«ղովրդապետը, եւ պէտք է շուտով համինք ուր որ աւելի ան-  
«հրաժեշտ կարօտութիւն կը դանուէր: Տեսնելու գնացի պառաւ  
«Յղիսաբէթ տիկինը, որ այս տան վերի յարկը կը բնակէ՝ վեր-  
«ջին դատիկոնը. իւր վիճակը ծանրացած է. երբ ձեր դրան առ-  
«ջեւէն կ'անցնէի լսեցի ձեր խօսակցութեանց նիւթը. եւ որով-  
«հետեւ ուրիշ բանէ այնչափ հաճութիւն չեմ զգար՝ որչափ իմ  
«հաւատացեալ ծուխերուս բերնէն քրիստոնէավայել զրոյցներ  
«զսել, կեցայ մտիկ ըրի մինչեւ վերջը. յետոյ զուռը զարկի՝ իմ  
«խնդա կցութիւնս յայտնելու համար քեզի՝ Յակոբ Վարպետ՝  
«տունեցած բարի բարի զգայմանցդ համար, եւ միանգամայն այն  
«քարեպաշտութեան եւ աւետարանական բարոյականին համար՝  
«տրոնցմով քու ընտանիքդ կը հրահանգես: Շատ ապրիս, շէն  
«մնաս. մի վախնար՝ Տէրը միշտ պիտի օգնէ քեզի» Յետոյ զէս  
'ի կնիկը զառնալով, որ իւր էրկան խօսքերուն վրայ նորօրի-  
նակ քաջալերութեամբ մը վստեալ կը տեսնուէր, «ան նայիմ՝  
«Փիլիմնա, ըսաւ, սա քիչ մը ստակը եւ շուտ գնաս հողա՝ քու  
«եւ ընտանեացդ ամենակարեւոր պիտոյքը». այս ըսելով Յակոբ  
Վարպետին ամուսնոյն ձեռքը արծաթի զրամ մը յանձնեց: Ետքը  
բարեկրօն հիւսան կողմը դարձած, «քեզ տեսնել կ'ուզեմ այսօր  
«Առաջնորդարանը՝ աւելցուց՝ Չայնաւոր պատարապէս վերջը.  
անպատճառ եւ անվրէպ եկնուր, քեզի խօսելիք մ'ունիմ. հիմայ

«ժամանակս չներեր, վասնզի ատենը ուշ է արդէն») Այս ըսելով մարդասիրապէս ողջունեց բոլոր անեղիններն, որոնք միաբերան օրհնէնք կուտային իրենց բարերարին, եւ դուրս կլաւ մեկնեցաւ:

Արտաքոյ կարգի ուրախութիւն մը այս բարեպաշտ ամուսնոց ճակտին վրայ կը փայլէր. օղը քիչ մը հանդարտած էր եւ արեգական ճառագայթ մը թափանցելով պատուհանէն ներս մտաւ. կարծես թէ բնութիւնն ինքնին մասնակցել կ'ուզէր այն ընտանեկան ցնծութեան՝ իւր լուսաճաճանչ ջերմութեամբ կեանք սփռելով աղքատ Յակոբին խեղճ բնակարանին մէջ:

Երկու փոքրիկ մանկիկները տրցակ մը խոտ առնելով արեւուն տակը գնացին կծկեցան տաքնալու համար. այս էր իրենց մի միայն թոնիրը: Իսկ Ֆիլոմնայ աճապարանօք վազեց գնելու համար պէտք եղած ուտելիքն, եւ քիչ մը հտըը տուն դարձաւ՝ իւր գոգնոցին մէջ Աստուծոյ տուած բարիքներէն այնքան բան դիզած, որ շատնցուրնէ՛ ՚ի վեր այն թշուառ անակին մէջ այնչափ առատութիւն տեսնուած չէր: Պետրոսիկ եւ Լուչիա հազիւ թէ նշմարեցին մայրերնին որ պարէնով բեռնաւորեալ տուն կը դառնար՝ մէկէն ոտք ելան եւ ցատքելով ուրախ զուարթ դէպ ՚ի իրեն վազեցին եւ շրջապատեցին զինքը, որ սեղանին վրայ կը զետեղէր դնած բաները. «չուտ ուտենք կեւրակուրնիս՝ ըսաւ Պետրոսիկ՝ վասն զի շատ անօթի եմ». անդիւնէն իւր փոքրիկ քոյրն վեր վերցընելով ու տարածելով իւր թաթիկներն «ինծի ալ մայրիկ ինծի ալ», կը կրկնէր անհամբերութեամբ:

Մէկէն Ֆիլոմնայ փայտի մնացորդ տաշեղներով կրակ վառելով քիչ մը խահուէ եփելու սկսաւ, որն որ հաղիւ երբէք տեսնուած բան մ'էր այս աղքատին տան մէջ: Երբոր ամենայն ինչ կազմ եւ պատրաստ եղաւ, նստան նախաճաշիկ ըրին եւ միանգամայն օրհնեցին զԱստուած որ այսպէս հոգացած էր զիրենք՝ օգնութեան հասնելով կարօտութիւններնուն մէջ: Յետոյ Յակոբ վարպետ բաբունօրէն բացատրելով այս խօսքերս աւելցուց. «Աստուծոյ եւ ընկերոջ սէրը նոյն եւ մի առաքինութիւն է, ինչպէս կը նշանակէ Սուրբն Թովմաս. սի որ ուրեմն ճիշտ սիրէ զԱստուած, պէտք է որ սիրէ նաեւ իւր ընկերն ալ իր անձին պէս. վասն զի ճշմարտիւ ամենքնիս ալ որդիք Աստուծոյ ճնք, եւ հետեւաբար մէկմէկու եղբարք: Եւ արդ' որչափ ալ «մեր անակեց Եղիսարեթի որդին Պարոն Թորոսը բարի զաւակ «մ'ըլլալէ շատ հեռու է եւ իւր ընտանեացն ալ անձնանուէր

«հայր բնաւ չկրնար ըսուիլ, այսու ամենայնիւ իրենք ալ թրչ-  
«ուառութեան մէջ են. փանօք Աստուծոյ՝ մենք նպաստ եւ օգ-  
նութիւն ընդունեցանք, հիմա կարգը մեզի եկաւ իրենց օգնե-  
լու: Հնազա քեզ տեսնեմ Վիլումնայ, սո սար իրենց գոնէ  
«այսօրուան համար ինչ որ հարկաւոր է կշտանալու եւ անօթի՝  
«չմնալու համար. յետոյ Աստուած ողորմած է, նորէն կը հոգայ  
«մեզի պեսք եղածը»:

Այս ըսելով՝ պաշիկ մը տուաւ իւր զաւկըներուն, եւ դուրս  
ելաւ պատարագի երթալու համար. ետքն ալ ըստ ժամադրու-  
թեան բարեսիրտ ժողովրդապետին հետ տեսնուելու համար:

Ճամբան գնացած ատենը՝ իւր գիմացն ելաւ պարոն թորոս,  
որն որ թեւին տակը կը կրէր իւր անազնութեան արուեստին  
գործիքները:

«Ի՞նչ է այդ. կիրակի օրերն ալ կ'աշխատիս կոր». հարցուց  
արձակ համարձակ Յակոբ Վարպետը:

«Անտարակոյս, պատասխանեց թորոս. միթէ ասօնի օրերն  
անօթի մնալու է եւ հաց պէտք չէ՞ ուտել»:

«Այո՛, ուտելու է, ըսաւ ատաղձագործը. բայց մեր առաջին  
«մտմտուքը՝ Աստուծոյ ծառայութիւնն ըլլալու է. վասն զի ինքն  
«է որ կը կերակրէ զմեզ, եւ անշուշտ դարման պիտի տանի  
«մեր պիտոյից. Աստուած միշտ հոգացած եւ խնամած է զիս»:

«Բայց ես քեզի չափ բախտաւոր չեմ. կ'երեւի թէ Աստու-  
«ած զիս մոռցած է», աւելցուց անագիչը:

«Թէ որ դուն իրեն չես մտածեր, վրայ բերաւ Յակոբ, ըս-  
«տուգիւ ինքն ալ չօգնիր քեզի. այսօր կը պատուիրէ պատարագ  
«տեսնելու եւ դուն աշխատելու կ'երթաս»:

«Պատարագն ալ ինչ է. հաց, հաց պէտք է» կրկնեց թորոս.  
«գիտե՞ս, այսօրուան վաստակս երկու օրուան ալ կը բաւէ: Սա  
«ճաճկաստանցին (այսպէս կը կոչէին արուելցի հարուստ մարդ  
«մը, որ չքեզ ամարանոցի մը մէջ կը բնակէր) ապսպրեց ինձ  
«փւր պարտիզին ծաղկանց ջերոցը նորոգելու, որ այս գիշերուան  
«փոթորկէն քանդուած էր. եւ լուր խաւրեց՝ որ եթէ այսօր աշ-  
«խատիմ, կրկին աւուրչէք պիտի վճարէ ինձի մտմտա՛ անգամ  
«մը թէ ասանկ բարեպատե՛ս առիթ մը ձեռքէ կը փախցնե՛մ:  
«Մ'նաս բարով. ինձի համար ալ պատարագ տե՛ս», ըսաւ հենգ-  
նական ժպիտով մը, եւ աճապարելով հեռացաւ գնաց:

Յակոբ ինքնիրենը ըսաւ, «թշուառ եւ եղկեկի մտրո՞ Աստ-  
«ուած քեզի լոյս տայ»: Յետոյ սուրբ խորհրդոյն անարիւն զեն-

ման ներկայ գտնուեցաւ. պատարագէն ետքը առաջնորդարան մտաւ:

«Եկուր, սիրեցեանդ իմ Յակոբ, ըսաւ մէկէն ընտանեւար ժողովրդապետն իրեն, նստէ հոս տեսնեմ»:

«Այս առաւօտ Հրամանքնիդ մեզի համար Տիրոջմէ առաքուած Սիրոյ Հրեշտակն եղաք», ընդհատեց իւր խօսքը մեր բարեպաշտ հիւննը:

«Ըրածս շատ քիչ բան է եւ մի միայն վայրկենական օգուտ մը ունեցած է». աւելցուց Տէր Յովակիմ. «հիմայ քեզի ուրիշ ուրախարար լուր մ'ունիմ աւետելու. այս առտու չուղեցի զորուցել, որովհետեւ աղէկ լրերն իսկ երբ յանկարծական կերպով եւ անօթի փորանց մէկու մը տրուելու որ ըլլան՝ կրնան «նաս հասցնել»:

«Աստուած իմ, գոչեց Յակոբ, ո՞րչափ բարեգորով ու զթած ես»:

«Հանդարտէ՛, շարունակեց բարեկրօն քահանայն, եւ մտիկ զբէ՛ ինծի: Մեծազարմ կոման Ռոտուփ վերջերս բլրակ ըսուած տեղը հոյակապ ամարաստուն մի գնեց, ուր իբր սնպան կ'ուղէ սնել ճշմարտապէս քրիստոնեայ ընտանիք մը, ինծի յանձնեց որ վեր ուզածին պէս կրօնասէր անձինք գտնեմ. յիրաւի չէի կրնար լաւադոյն ընտրութիւն մ'ընել՝ քան զձեզ չորսերնիդ առաջարկելով: Կոն կան կարասիքով յարդարեալ բնակարան մը պիտի ունենաք, այրելիք փայտ եւ ինչ որ հարկաւոր է. իսկ «ամասական թոշակնիդ պիտի բաւէ ձեզի հանգիստ ապրելու «համար»:

Յակոբ ուրախութենէն ինքզինքն ուրիշ աշխարհք մը փոխադրուած կը կարծէր. Աստուած եւ Հրամանքնիդ միշտ օրհնեալ ըլլաք» ըսաւ ատողձագոր՛ը:

Ա՛ռ նայիմ, խմբէ՛ տիէ՛, աւելցուց ժողովրդապետը՝ գաւաթ մը անապակ գինի գնելով իւր առջեւը. անա քեզի ուրիշ քիչ մը ստակ ալ, այս քանի մ'օրերուս ծախքերուդ համար. որովհետեւ գալ հինգաբթի ձեր նոր բնակարանը պիտի անցնիք. գնա՛ պատմէ՛ այս ամէնը մի առ մի քու ընտանեացդ, եւ Աստուած զձեզ օրհնէ՛ :

Դ.

Յակոբ արտօսարպիր աչօք եւ խանդաղատանօք օրհնելով

զԱստուած եւ իւր սրբամատոյց պաշտօնեայն՝ մէկ շնչով տուն հատաւ, հոն մէկզի զնեղով առած փոքրիկ գումարը, սկսաւ մէկիկ մէկիկ պատմել իւր կողակցին ստացած նոր պաշտօնը՝ շնորհիւ ազնուասիրտ ժողովրդապետին: Սրտաշարժ տեսարան մ'էր այս համեստ ընտանեաց ուրախալից բերկրութիւնը. Պետրոսիկն արդէն աչքին առջեւը կը բերէր իւր փոքրիկ տաքուկ մահճը ամարանոցին մէջ՝ փոխանակ յարալից անկողնոյն. իսկ մանրիկ Լուչիա՝ որ չէր կրնար խելք հասցնել այս բոլոր եղածին՝ տեսնելով ամենքն ուրախ զուարթ, ինքն ալ կը ցնծար:

Ամբողջ օրն այն տան մէջ ուրիշ խօսակցութիւն չկար՝ եթէ ոչ այն անակնկալ եւ առատաձեռն օգնականութիւնն, որով Աստուածային նախախնամութիւնը զիրենք սփոփած եւ մխիթարած էր:

«Ըսէ ինծի, Ֆիլոմենայ, գոչեց Յակոբ. հիմայ կը տեսնես որ պարապ տեղն աղօթած չես. միթէ ընդունած վարձատրութիւնն իս մեր կրած վշտերէն եւ նեղութիւններէն շատ վեր ու մեծ չէ՞. միթէ Աստուած անհուն բարի չէ՞»:

«Ճշմարիտ է ըսածդ՝ սիրելիդ իմ՝ իրաւունք ունիս, պատասխանեց իւր կինը. բայց ես չար զիտմամբ ըսած չէի»:

«Դիտե՛մ, գիտե՛մ», աւելցուց էրիկը:

Սրդէն իսկ կէս դեշերը կը մօտենար եւ երկու ամուսինք անկողին երթալու վրայ էին՝ երբ յանկարծ տան վերի յարկէն, ուր կը բնակէր տիկին Նդիսաբեթ, ողբոց ձայներ լսուեցան: Մէկէն Յակոբ վեր վազեց. Աստուած իմ, ի՞նչ տեսարան. խեղճ պառաւը մարմրուք ունէր. Պարոն Թորոսին կինը Թագուհի եւ իւր մէկ հատիկ զաւակը Գրիգորիկն չոր յարզին վրայ լքեալ՝ դառնապէս կուլային. նոյն ինքն Թորոս հին աթոռի մը վրայ ինկած՝ մեռելական տժգունութեամբ լալաղին կը հեծէր եւ կը հառաչէր:

«Մ'նչ կայ, ի՞նչ հանդիպեցաւ». հարցուց Յակոբ:

Թագուհի հեծկլտանօք հաղիւ թէ կրցաւ այս քանի խօսքերը զրուցել. «ամէնքն իս ալ կը սպասէինք Պարոն Թորոսին, որ մեզի հաց եւ ուտելիք բերէր շահած կրկին աւուրչէքովը. բայց, ո՛հ Աստուած իմ, հիմայ իսկ տուն դառձաւ առանց հացի եւ առանց ստակի»:

«Ա՛հ, անիծեալ խաղ, ընդհատեց անդիէն Թորոս. տուն դառնալու վրայ էի՝ երբ զինևտան առջևէն անցած ժամանակս այն չարածճի Չենոր եւ Գեւորգ խաղամոխները զիս բռնի ներս

մտոցուցին եւ ստիպեցին որ բաժին մը քարտէս խաղամ հետեր-  
նին: Ես միտքս դրի մինչեւ Վ Ֆրանք խաղալու եւ քովս մնա-  
ցած միւս 5 Ֆրանքով ալ ընտանեացս ուսույլիք հողալու եւ  
զերենք անօթութենէ ազատելու. բայց աւանդ, կորուսի այն 1  
Ֆրանքն. այն ատեն փորձ փորձեցի շահիլ զայն նորէն խաղալով.  
ուրիշ Ֆրանք մ'ալ ձեռքէս ելաւ. սոյն միջոցին ըսի ինքնիրենս  
որ՝ 4 Ֆրանք ալ՝ 3 ալ բաւական են պատառ մը հաց ուտելու  
համար, եւ վերստին խաղացի. երրորդ Ֆրանքն ալ՝ չորրորդն ալ՝  
վերջապէս հետզհետէ ամէնքն ալ մինչեւ վերջինը կորսնցուցի.  
խեղճ եւ թշուառ ընտանիք իմ): այս ըսելով աչքէն հեղեղաբար  
արցունք հոսելու սկսաւ:

Յակոբ Վարպեա բոլոր մարմնոյն մէջ սարսուռ եւ փշաքա-  
ղում մը զգաց՝ տեսնելով այս եղկելիներուն խեղճ ողորմուլի վի-  
ճակը. «հիմայ կը տեսնես թէ ճշմարիտ է եղեր քեզի դրուցածս,  
ըսաւ իւր խօսքն ուղղելով թորոսին. Աստուած այս ամէնը թող  
տուաւ՝ զքեզ խրատելու համար եւ միանգամայն քեզի հասկը-  
ցնելու համար թէ չօրինաւոր աշխատութեամբ շահուած զրամը  
պտուղ չբերեր երբեք: Յիշէ՛ անխղճաբար դիզուած վաստակին  
նկատմամբ առակն, որ կ'ըսէ՝

«Սատանայի է ալիւր

«Որ լուծանի 'ի թեփ զուր»:

«Բայց մի՛ այլ եւս վշտանար, հետս եկո՛ւր: Մեր բարեկրօն  
ժողովրդապետը Տէր Յովակիմ ինծի քիչ մը ստակ տուաւ, եւ  
տունս պատրաստ արգանակ կայ քու հինաւուրց մօրդ համար.  
եւ կը յուսամ թէ ձեզի երեքնուդ համար ուրիշ բան մ'ալ պի-  
տի գտնուի անշուշտ: Ասկից զատ՝ ինքն ինծի տնպահի պաշ-  
տօն մը գտաւ ըլրակի ամարանոցին մէջ, որ այժմ ազնուատո՛հմ  
Ռոտուլի Կոմսին է: Արդ՝ վարքդ փոխէ, առաւել հաւատք եւ  
երկիւղ Աստուծոյ ունեցիր, բարի քրիստոնեայ մը եղի՛ր, ընտան-  
եացդ ըստ ամենայնի անձնանուէր. եւ ես ձեռքէս եկածը պիտի  
ընեմ քեզի օգնելու համար: Ինչպէս գիտես՝ յիշեալ կ'ալուած-  
քին մէջ՝ որ խիստ ընդարձակ է՝ աշխատութիւն անպակաս պի-  
տի ըլլայ քեզի: Կը խոստանանս ինձ»:

«Այո՛, կ'երգնում քեզի, գոչեց թորոս ծունկի վրայ եկած  
Աստուածածնայ պատկերին առջեւը, կ'երգնում բոլորով սրտիւ»:

Ամէնքը մէկանց լալու սկսան այս վայրկենիս, բայց այլ  
եւս վհատութեան արցունք չէին, հապա սրտառուչ մխիթարու-  
թեան: Պարոն թորոս բոլորովին կերպարանափոխ եղած էր, եւ

իր խօսքը պահեց. նոյնն ըրաւ փոխադարձարար նաև. Յակոբ  
Վարպետ: Եւ այսպէս Հաւատք՝ Յոյս՝ Սէր առաքինութիւնք  
յուսահատութենէ աղատեցին երկու քրիստոնեայ ընտանիքներ  
որք յետոյ չափաւոր բարեկեցութեան մէջ ապրեցան՝ օրհնելով  
զՍատուած եւ վայելելով առսնին խաղաղութիւն, որ աշխարհ-  
քիս մէջ մեծագոյն բարութիւններէն մին է:

Թարգմանեաց յիտալերէնէ  
Յ. Վ. Մէսսէառ

### Վ Ե Ր Ջ Ի Ն Տ Ե Ր Ե Ի Ք

Ինկա՛ն տերեւք, ահա՛, մա՛յր իմ,  
Խաւարեցաւ արեւն աշնան.  
Անոր պէս ես կը խաւարիմ,  
Եւ կայծք հոգեոյս հող կը դառնան:  
Ո՛վ յոյս, ի գո՛ւր ինձ կը ժպտիս,  
Չե՛մ ես, ա՛յ ջեմ երկրի բընակ,  
Հագիւ բացուած աչկունք սրտիս  
Կը մեռնիմ ես անժամանակ.  
Ո՛րջափ արտօսք ու ցաւք մաշող  
Հիւծեցին զիս մինջէս ինկայ,  
Ա՛յ լըմբեցաւ, լոկ բայլ մի կայ  
Մահու մահճես մինջէս ի հող:  
Կ՛երթա՛մ, բայց բաղցր երագներով  
Առյի է դեռ հոգիս խըռով:  
Այս աներեալ իմ մարմնոյս մեջ  
Ուր շունջ մ՛անգօր հագիւ մընաց,  
Կեճաց սիրոյ փափաքանաց  
Կը վատի դեռ հրդեհ մ՛անշեջ:  
Ա՛րդ, փրջեցեք աշնան հովեր,  
«Մեռի՛ր» ըսաւ վըճիւռն անդարձ,

Երբոր մընան ծառք անըստուէր  
Ըզհող գլխոյս առնեմ ես բարձ:

Մընաս բարեա՛ւ, մա՛յր իմ անոյշ,  
Վէրք մ'ալ սրտիդ արիւնահոս,  
Կ'իջնէ գաւակդ ի փոսն անյուշ  
Ու գրեզ մինակ կը ճըգէ հոս . . . »

Մըռընջէցին հողմուներ ճմբան.  
Աւառօտ մի՛ արշալուսին՝  
Թօթափէով ըզբեռն ուսին  
Մըտաւ յանբոյքն ի քընարան:

Մէրկ, անպաճոյճ դըրին ի հող  
Յառոց գաւակն այն հարագատ  
Որ վշտահար մօրմէն ի գառ  
Զունեցաւ իւր վըրան յացող:

*Քաղկեդոն*

*Կարապետ Ա. Ոսկեան*



# ՊԱՏՄԱԿԱՆ ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆ

## ՔՍՂԱՔԱԿԱՆ

### ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹԵԱՆ ՎՐԱՅ

Շարայարութիւն (1) Եւ վերջ

Գօլբերթականութիւն (Le Colbertisme) — Այս գրութիւն իրեն յետին, բանիբուն եւ իմաստուն ներկայացուցիչն ունեցաւ յանձին Գօլբերթի որ խկապէս զայն 'ի կիր առաւ՝ ուստի գրութիւնն իսկ կոչուեցաւ Գօլբերթականութիւն:

Սակայն Գօլբերթ Գաղղիոյ ամենամեծ եւ ականաւոր անձնաւորութիւններէ մին լինելով հանդերձ սխալեցաւ: (2)

Ինչ որ ըսինք ինտիւսիտիստ գրութեան վրայ նոյնն ալ ըսել հարկ է Գօլբերթականութեան վրայ եւ մասնաւորապէս որ այս վերջինը հիմնուած է ազգաց մէջ ընտան մի հակառակութեան վրայ:

Թէ թանգարական գրութիւնը եւ թէ պաշտպանական գրութիւնը ներհակն են այն գրութեան զոր կը կոչեն գրութեան փոխանակութեանց ազարութեան (système de la liberté des échanges), կամ ազար փոխանակութեան (de libre échange) կամ գրութեան ճարարական ազարութեանց ազար ճրջման (de la libre concurrence des libertés industrielles).

\*  
\*\*

Բնաճարական գրութեան (système physiocratique). — Վաճառականութեան կշիռքի եւ պաշտպանութեան զործազրման վրամանգաւոր հետեւանքներէն վաւերացեալ այդ կրկին գրութեանց

(1) Տե՛ս Պարիզի թիւ 15, Բ. Տարի:

(2) Մէ՛քն Մինկեթիէ է-ր «Dissertazione sul Colbertismo» անուն Բանախօսութեան մէջ խորին եւ հետաքննին մի փնտրարութեան ըրա՛ծ է այս գրութեան վրայ զոր ջերմապէս կը յանջնարարենք մեր հետաքննիչ ընթերցողաց:

վարդապետական անտեղութիւնն իսկոյն հակադրեցութիւն մը առաջ բերաւ որ նախ 'ի Յրանտա յերեսան դարով այսպէս 'ի լոյս եկաւ Քաւաբակիան կոչուած դրութիւնը:

Թանդարականութիւնը եւ Գօլպէրթականութիւնը կը վառաւորէին ձեռագործ ճարտարութիւնը, եւ ընավարութիւնն ալ ընդհակառակն վառաւորեց երկրագործութիւնը այնպէս որ չափազանցելով կոչեց զայն *Ժակ աբուէս* կամ արտադրիչ ճարտարութիւն, 'ի վերայ հիման թէ հարստութեան ազդիւրն մի միայն երկրին մէջն էր եւ բոլոր միւս ճարտարութիւնը իբր *ածու նկատեց*:

Թանդարականը եւ Գօլպէրթականը կը քարոզէին աէրութեան ամենակարող լինելն եւ թէ ստանլին եւ թէ հասարակաց նիւթական բարեկեցանութեան անկէ կախումն ունենալն, խանութելով եւ գործակցելով ազգային աշխատութեան մէջ եւ ամեն ինչ կարգաւորելով: Բնավարականը ընդ հակառակն կը հռչակէին թէ աշխատութիւնն պարտէր լինել ազատ, թէ նոյն իսկ աէրութեան խանութելը զայն կը բռնաբարէր եւ կ'ընկճէր ավրելով անհատական նախաձեռնութեան, գործօնեութեան եւ պատասխանատուութեան սեղեւոյն, ուստի՝ այս սկզբանց վրայ յենլով հրապարակաւ յայտարարեցին իւրեանց նշանաւոր բանաձեւն «laisser faire, laisser passer», բանաձեւ որ յետոյ զրպարտուեցաւ զո՞ր դնալով մի ընդարձակ եւ չարակամ մեկնութեան որ բնաւ բնավարականաց մտքէն չէր անցնէր, զի իրենք զայն լոկ արուեստից, ճարտարութեանց եւ վաճառականութեան դաշտին մէջ կ'ուզէին բացարձակապէս գործածել: Վերջապէս թանդարականը եւ Գօլպէրթականը կը քարոզէին՝ եթէ ոչ արձակ համարձակ 'ի վարդապետութեան՝ գէթ եւ ստուգիւ 'ի գործածման՝ թէ յատկապէս անտեսական յարաբերութեանց մէջ չի կային բնական օրէնք, եւ այսպէս ալ, անբանաբարելի օրէնքներ նման անոնց որ կը կատարեն ֆիզիքական աշխարհը եւ թէ այն որ բնական է ընդհակառակն հակառակութիւն մ'է ընդ մէջ ազդի եւ սղդի,—եւ բնավարականը ալ կը քարոզէին թէ ոչ միայն անտեսական յարաբերութիւնը, այլ բոլոր ընկերային քաղաքային յարաբերութիւնը վարեալ կան բնական օրէնքներէ, թէ անտեսական ասպարիզին մէջ դերադոյն օրէնքն է աշխատութեան ազատութիւնը, եւ թէ շահուց հարկաւոր ընդգիծութեան համար ազդերն՝ մին միւսոյն թշնամի լինելէ հետի՝ ընդհակառակն համերաշխ են շահերու համերաշխութեան պատճառաւ:

Պէտք է դիտել թէ բնավարականք ստեղծեցին զրուծիւն մ'որ կ'ընդգրկէ քաղաքական ընկերութեան ամբողջական կարգաւորումը, զրուծիւն մ'որ կը նկատէ ամբողջ ընկերութիւնը իւր բոլոր կողմերով՝ տնտեսականներէն զատ՝ բարոյական, իրաւական, քաղաքականներն յատկապէս, հաստատելով թէ յայտ ամենայնի կայ մի բնական կարգ: Ուստի զրուծեան անունն իսկ Physiocratie կը նշանակէ Բնավարութիւն, Բնական վարչութիւն, Բնական կարգ, Տնտեսութիւն՝ կարգաւորեալ իրարու ամբողջութեան ընդարձակ իմաստիւ:

Ըստ վկայութեան բաղմայ՝ այս նոր վարդապետութիւնը յղացաւ վաճառական տնտեսադէտ մը վէճաւան տը Կուրնէ (1) անուամբ որ իրեն երեւելի կողմնակիցներ ունեցաւ Մալզէրպ, Մօրէլլէ, Տը Մօնթիւնեի:

Կուրնէի գաղափարներն ստիտարար սլարդուեցան Ֆրանսուա Գէանէի (2) կողմէ որ Լուգովիկոս ԺԵ. ի բժիշկն էր եւ զիտութեան նոր սկզբունքներն աւելի ժողովրդականացնելու համար գրեց des maximes générales du gouvernement économique d'un règne agricole եւ մի երեւելի tableau économique որ իբր տնտեսագիտական աւետարան մը կը նկատուի:

Գէանէ իրեն առաջնորդ ունեցաւ Միրապօ մարքիզը (հայր), Պօպօ երէցն, Լըթրօն, Տիւփօն տը Նըմուր(3) (որոյ զրուծիւններն հաւաքելով 'ի լոյս ընծայեց), եւ ամենանշանաւոր հետեւորդն եղաւ Թիւրկօ պարոն տը Լ'Օլն երեւելի վիճակագիրն որ միեւնոյն ժամանակ Լուգովիկոս ԺԶ. ի նախարարն լինելով փորձեց ի կիր առնուլ զպրոցին սկզբունքը: Նոյն ինքն Թիւրկօ նուա-

(1) Կուրնէ ծնած է 'ի Սէն-Մարց 1712 ին եւ մեռած 1759 ին, եւ ինքն է որ հաշակէց «laisser faire, laisser passer» ի բանայեւ: ասկայն քնա- գրաւոր աշխարհութիւն զի լողուց:

(2) Գէանէ ծնաւ 'ի Մէրի արդի Սէն-է-Ուալի նահանգին մեջ 4 Յունիս 1694 ին եւ մեռաւ 1774 ին: Գաղղիական լայնածաւալ Համայնագիտական բարարանը նորա: «Fermiers et grains» վերնագրով երկու յօդուածներն իւր պարունակէ: — Ըստ Միրապօի աշխարհիս ասիտերեւելի երեք գիտերն են Գրաւթիւնը, Վաճառականութիւնը, եւ Գէանէի «Tableau économique»ը (Պատկեր օրնտեսական):

(3) Dupont de Nemours.

զեցուց բնավարականաց կողմանէ տրուած չափադանցեալ կարեւորութիւնն թէ երկիրն ըլլար միակ ազգբեր հարստութեան, զուրս ցատկեցնելով միանգամայն գրամազլխի կարեւորութիւնը (1):

Ճարտարական կամ աշխատութեան դրամութեան (système industriel ou du travail),—Թիւրիօի եւ Գլանէի ժամանակակից եւ իրենց բարեկամ Ազամ Սմիթ, նպատատարեալ յատկապէս իւր ապրած մեջավայրէն,—Անգլիա, իւր հայրենիքէն (2),—օգտուելով, անտարակոյս, բնավարականաց ուսումնասիրութիւններէն որ 'ի Գաղղիա եւ իրեն հայրենակից Նօրթի, Չայլտի, եւ Գլեթիի անտեսագիտական երկերէն, որք մինչեւ ժ.՛. գարը բարբօքեցին աշխատութեան ազատութեան զազախարները եւ բացատրեցին զրամին յատուկ պաշտօնը, եւ փոքր ինչ ալ հետեւելով հռչակաւոր պատմաբան եւ իմաստասէր Դաւիթ Հլամի,—որ 1752 ին իւր ճշակիտ փոփոխութեանիւր կը հրատարակէր,—Սմիթ ճանչցաւ հիմնական եւ էական սխալմունքը թանգարականաց, Գօլդէրթականաց եւ բնավարականաց, առաջինները՝ հարստութեան պատճառաւը վերապրելով զրամին, երկրորդները՝ զործարաններու եւ ձեռագործներու, վերջիններն ալ՝ երկրիս եւ երկրագործութեան, եւ տեսաւ ու ապացուց թէ հարստութեան

---

(1) Դեղիքն է ինչ նախնի բնավարականիտ իտմք մը կը կապէին զոր՝ ինչամանաբար՝ հերշոտած փոփոխութեանց (la secte des économistes) կ'անուանէին: Եւ այսպէս կոչեցեալ պահման 1725 էն 'ի վեր այնինքն Լոնդոնի կ'ու ժ.՛. ինքատարութեան օրով հետեւեալ վերնագրով պարբերական ինքն մը կը հրատարակէր «Ephémérides du citoyen ou Chronique de l'esprit national» որ արդէն այն ժամանակնէն citizen-esprit national բառերն բառկան յանդիմութեան ծ'էին է- +էլ ծ'ալ նշանակ յետոյ գալիտ ժամանակներուն !:

(2) Սմիթ ծնաւ 'ի Գիբգալտի 1723 ին եւ մեռաւ 1790 ին, դաստարտ եղաւ գիլիտոփայտութեան 'ի Կլասֆօլ, է- հրատարակեց նաեւ «Բարոյական զբացմանց վարդապետութեան» անան գիրքը: Իրաւացի էրէտելի փոփոխութեան Պօփարթօ «Քաղաքական Տնտեսութեան Կալիքտն» կը կոչէ Սմիթը, եւ Պլանգի ևս կըսէ ինչ անոր արժէտն յայտ կը կայանայ ինչ նախ եւ առաջ ինչ գործէն ինչ ի՛նչը համար ճեղք էն այն սկզբնաւ զոր ուրիշներն ալ պարզած էին կամ գոնէ գծած էին իրօք յառաջ Իրաւից և Ծրանայի մեջ, նոյն իսկ Անգլիոյ մեջ:

զերազոյն պատճառն է աշխարհաբանք, մարդկային զործունեութիւնը (1):

Աշխատութիւնն է որ կ'ստեղծէ եւ կը յաւելու փոխանակելի օգտակարութիւնքը, հարատւութիւն է այն ամենն որ օգտակար է. օգտակարութիւնն եւ ճշդիւ փոխանակելի օգտակարութիւնն է արդիւնք աշխատութեան:

Հանքատեղեաց աշխատութիւնէն յառաջ կուգան ոսկին, արծաթն եւ մետաղները, — նախնական նիւթերու աշխատութեանէն կը ծնին նորանոր արտադրութիւնք եւ որ կը հասարակութիւնը մէջ ազգաց, — արակու վրայ զործուած աշխատութիւնէն եւս երկիրն կ'ստիպուի արտադրել Յետոյ առաջին պատճառ աշխատութեան արտադրիչ զօրութեան իւր բաժանումն է զորմէ ակրարար գրեց եւ խօսեցաւ Սմիթ(2). եւ այս առթիւ երեւելի է գնդասեղաց շինութեան օրինակն զոր Սմիթ 'ի մէջ կը բերէ ցուցնելու համար թէ որպիսի եւ սրքան առակելութիւններ կը ծնին աշխատութեան բաժանումնքէն:

Սմիթ եւս կը պաշտպանէ ճարտարութեանց եւ վաճառականութեան ազատութիւնը, ինչպէս Կուրնէ, Գէննէ, Թիւրքո, լայց սարբեր տեսութեամբ եւ փաստերով:

Պիտի փակիւնք մեր այս ամենահամառօտ պատմական ծանօթութիւնը Տնտեսագիտութեան վրայ յիշեցնելով որ ժ.—Պ. Սէյ (3)

(1) Դեպքի է ինչ Սմիթ, դասարան Բարոյաբանութեան 'ի համալսարանին Կլապօզի, կը նկարէր եւ կը դասախօսէր Քաղաքական արտաբանութեան իբր մի մասնաւոր մասն փիլիսոփայական գիտութեան շրջիստեղծութեան, բան մ'որ պատիւ կը բերէ Տնտեսագիտութեան անհնազանդութիւնը զայն գրեթէ իւր սկզբանք միջ:

(2) Այն անձան գիրքն որ արեւելական գիտութեան հոյք կոչուելու փառքն ու պատիւն ապահովեց Սմիթի հետեւութեանն է «հետազոտութեան» 'ի վերայ բնութեան և պարճաւոր ընշաւտութեան ազգաց» որ ճշդիւ կը համապատասխանէ իւր Բարոյական Իմաստասիրութեան շրջանքն եւ վերջին մասին:

(3) ժ.—Պ. Սէյ ծնաւ 'ի Լիոն 1767 ին և մեռաւ 'ի Փարիզ 1832 ին. իւր գլխաւոր գրութեանն է «Traité d'Economie politique (1803), Catéchisme d'Economie politique (1815), Cours complet d'Economie politique (1828—1830) որ մեր այս գիտութեան իբր Բերանդանութեանը կը նկատուի:

ոչ միայն Սմիթի դադարարաց ժողովրդականացիչն եղաւ  
այլ նաեւ բացատրողն եւ բեղմնաւորիչն եւ արդ՛նա որ կը վաւ-  
ժաքի ունենալ ընդարձակագոյն ծանօթութիւններ զխտութեան  
մշակման եւ զարգացման պատճառներուն նկատմամբ, կը յանձ-  
նարարենք զիմոյ առ Պլանքի (1) որ գերազանցօրէն Պարսքանն  
է Տնտեսագիտութեան:

ՅԱՐՈՒԹԻՒՆ ՈՒՆՃԵԱՆ

## ԿԵԱՆՔ ԲԱՌԻՑ

Ի ՄԱՍՆԱԻՈՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐԵԱԼ  
ՅԲԱՆՍԵՐԷՆ ԲԱՌԻՑ ՎՐԱՅԷՆ

→→→⊙←←←

(Շարայարութիւն) (\*)

Եզրակացութիւն

Գ Լ Ո Ւ Խ Ա .

Տարախոխութիւն

(Contagion)

Երբ քերականական զործածութիւնն մասնաւոր բացա-  
տրութեանց մէջ ամփոփէ խումբ մը բառեր, զոր վարժինք մի-  
ատեղ տեսնելու՝ տարախոխութեան արդիւնքներ կը տեսնենք.  
զոր օրինակ pas, point այսօր բացասական մասնիկը aucun,

(1) Տէ՛ս «Histoire d'Economie politique en Europe,  
par Blanqui, յոյժ կարեւոր արհեստագիտական արեսակերով:

(\*) Տէ՛ս Պարսիքի թիւ 14, էջ 336

personne, rien, guère բացասական զերանուանք՝ սովորաբար ne մակրային հետ դորժածուելուն պատճառաւ իրենք ալ բացասական բառեր դարձեր են:

Հին Գաղղիացին կըսէր la rien que j'aime guère. այսօր կըսեն la chose que j'aime beaucoup. Նոյն պատճառն երբեմն տարբեր արդիւնքներ եւս կ'արտադրէ: Mais ի սկզբան կընչանակէր աւելի, cependant կը նշանակէր pendant cela, այս երկու բառք բազմաթիւ բաղադրութեանց մէջ հակադրական իմաստ մը յայտնելուն համար՝ ստացեր են քաջ սփչոյն առմունքն: Դիտեցէք pour նախադրութեան զանազան իմաստներն սա հետեւեալ նախադասութեանց մէջ:

On se promène pour le plaisir et pour la santé հաճոյքի եւ առողջութեան համար կը շրջագային:

Pour le plaisir que je trouverais à la promenade je n'en reste pas moins à la maison. Որչափ եւ հաճոյք դանեմ շրջագայելու՝ դարձեալ տուն կը մնամ:


Pour agréable que soit la promenade, je n'en reste pas moins à la maison. Թէ եւ ակտրժելի է շրջագայութիւնը ոչ ինչ նուազ տուն կը մնամ:

Pour riches que soient ces banquiers ils ne peuvent résister à une telle crise. Այս սեղանաւորք հարուստ ըլլալով հանդերձ այսպիսի տաղնապի մը պիտի չկարենան զիմադրել:

Ah! pour être dévot, je n'en suis pas moins homme. (Molière): Ո՛հ բարեպաշտ ըլլալովս՝ մարդ ըլլալէ չեմ դադրիր:

(Շարայարեյի)

Թ. ԹԷՐԶԵԱՆ.



ՊԱՏԿԵՐ տասն և հինգ օրք մի անգամ կը հրատարակուի:

Բաժանորդագրութեան տարեկան գինն է  
Կ. Պօլսոյ համար . . . . . 40 դանեկան  
Գաւառաց և օտար երկիրներու համար  
ըղբատարի ծախքն ի միասին հաշուելով 50 « «

## Իշխանացիներ թիւ 2 դահնեկան

ՊԱՏԿԵՐԻ խմբագրատունն է ի Բերա, Եւշիլ փողոց  
Թիւ 1, ուր պետք է դիմել բաժանորդագրութեան և թերթին  
վերաբերեալ այլ ամենայն խնդրոց համար:

RÉDACTION DU BADGUERE

Constantinople, Péra, rue YÉCHIL N° 1

معارف نظارت جلیله سنک رخصتیه طبع اولتمشدر